ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

Հասմիկ ՂԱԶԱՐՅԱՆ
ԱրՊՀ ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: Shoger.minasyan@mail.ru

Շողեր ՄԻՆԱՍՅԱՆ
ԱրՊՀ ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: ghazaryan.hasmik@mail.ru

ԺԱՄԱՆԱԿԱԿԱՒՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում ներկայացվում են ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգում առկա այն անկանոնություններն ու շեղումները, որոնք կապված են նախադասության անդամների կապակցման եղանակների՝ առդրության, համաձայնության, խնդրառության հետ, պայմանավորված են շարադասությամբ, նախադասության անդամների դրսևորման առանձնահատկություններով:

Բանալի բառեր՝ *անկանոնություն, բացառություն, շեղում, նորմ, համաձայնություն, խնդրառություն, առդրություն, շարադասություն, նախադասություն, նախադասության անդամ, հնչերանգ, կապակցման եղանակներ:*

А. Газарян, Ш. Минасян

НАРУШЕНИЯ СИНТАКСИЧЕСКИХ НОРМ В ПРОСТОМ ПРЕДЛОЖЕНИИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

В статье представлены неправильные виды синтаксической связи – согласования, управления и

примыкания, в современном армянском, которые обусловлены синтаксисом и отличительными особенностями членов предложения.

Ключевые слова: *неправильные, исключения, отклонение, норма, соглсование, управление, примыкание, предложение, член предложения, интонация, виды связи.*

H.Ghazaryan Sh. Minasjan

SYNTACTIC IRREGULARITIES IN SIMPLE SENTENCE OF MODERN ARMENIAN

This article outlines the irregularities and deviations in sentence member binding, namely collocation, verb government and agreement in Modern Armenian. This is accounted for by syntactic and functional features of sentence members.

Key words: *irregularity, exception, deviation, norm, agreement, verbal government, collocation, syntax, sentence, sentence member, intonation, binding.*

Յուրաքանչյուր գրական լեզու, այն կրող ժողովրդի լեզվամտածողությամբ պայմանավորված, ունի իր որոշակի կանոններն ու օրինաչափությունները, որոնցով էլ ուրվագծվում են լեզվական նորմի սահմանները: Լեզվական նորմը լեզվի զարգացման տվյալ փուլում սահմանված, հասարակայնորեն ընդունված և գործող լեզվական միջոցների համակարգն է, որը պարտադիր է հասարակության բոլոր անդամների համար: Այն պատմական է, ավանդական, հարաբերականորեն կայուն և անփոփոխ՝ ամրապնդված տրամաբանական գործոններով, ավանդությամբ, ճշտությամբ և բարեհնչությամբ:

Լեզվական նորմը, ի տարբերություն համակարգի, իր մեջ կարող է ընդգրկել անկանոնություններ ու բացառություններ: Համակարգային կանոնական ձևերի կողքին գրական լեզվի նորմով կարող են հաստատվել այնպիսի ձևեր, որոնք հակասում են լեզվական համակարգին, այսինքն՝ հակահամակարգային են:

Հայ լեզվաբանության մեջ առաջիններից մեկը Է. Աղայանն էր, որ լեզվի՝ որպես համակարգի բնութագրման մեջ պատշաճ տեղ հատկացրեց հակահամակարգերին: Նա լեզուն համարում է համակարգերի և հակահամակարգերի մի ամբողջություն և նշում. <<Գործածելով հակահամակարգային տերմինը լեզվի նկատմամբ՝ մենք դրանով

հասկանում ենք այն բոլոր ենթահամակարգերը, մասնահամակարգերը և առանձնակի իրողությունները, որոնք <<հակասում>> կամ հակադրվում են լեզվի տվյալ փուլի համար կենսունակ, առավել ընդհանուր և միասնական բնույթ ունեցող համակարգերին, ենթահամակարգերին ու մասնահամակարգերին>>:[1] Լեզվական հակահամակարգային իրողությունների պատճառները տարբեր են լինում՝ լեզվի նախորդ շրջաններից պատմականորեն փոխանցումն ու պահպանումը, բարբառներից ու այլ լեզուներից՝ երկարատև շփման ու ազդեցությունների հետևանքով մուտք գործելը, լեզվի տվյալ փուլում առաջացող, բայց դեռևս կանոնական մակարդակի չհասած և համընդհանուր չդարձած իրողությունների առկայությունը, քերականական համաբանությունը և այլն:

Լեզվական նորմից դուրս գտնվող լեզվաձևը, եթե անգամ համակարգային է, չի կարող ընդունելի լինել, և ընդհակառակը, նույնիսկ լեզվի համակարգին հակասող լեզվաձևը ի վերջո ընդունելի կարող է դառնալ, եթե լեզվում նրա գոյությունն արդեն իսկ անժխտելի փաստ է դարձել համատարած կիրառության պատճառով: Լեզվական անկանոնություններն ու բացառությունները վերաբերում են լեզվի բոլոր մակարդակներին՝ հնչյունական, բառային, քերականական:

Սույն ուսումնասիրության սահմաններում մեզ հետաքրքրում են ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգում (պարզ նախադասություն) առկա օրինաչափ ձևերից շեղվող, բայց լեզվական նորմով ընդունված անկանոնությունները, որոնք կապված են նախադասության անդամների կապակցման եղանակների՝ առդրության, համաձայնության, խնդրառության հետ, պայմանավորված են շարադասությամբ, որոշ տիպի նախադասությունների, դրանց կապակցման միջոցների, նախադասության անդամների դրսևորման առանձնահատկությունների հետ: Ստորև կփորձենք դրանց քննությունը կատարել առանձին-առանձին:

1. **<<Առդրությունը նախադասության անդամների կապակցման եղանակներից մեկն է, որի դեպքում կապակցվող անդամներից որևէ մեկը չի պայմանավորում մյուսի քերականական ձևը>>:**[2] Այդպես են կապակցվում որոշիչն ու որոշյալը, մակբայական պարագան ու ստորոգյալը, համադասական հարաբերությամբ միացած բազմակի անդամները: Բայց կա առդրության մի տարատեսակ, երբ լրացումն իր լրացյալին

---

[1] ***Աղայան Է.***, *Լեզվաբանական հետազոտություններ, Եր., 2003, էջ192:*

[2] ***Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան***, *Շարահյուսություն, Երևան, 2009, էջ 11:*

պարտադրում է որոշակի թիվ: Դա կոչվում է **թվային կախում**: Այսպես՝ հոգնակի որոշյալներ են պահանջվում՝

Ա) երբ ածականով կամ գոյականով արտահայտված որոշիչները կրկնվում են (**մեծ-մեծ խոստումներ** , **մանր-մունր հարցեր** , **սուտ ու մուտ բաներ**, **լայն-լայն փողոցներ**, **շարան-շարան մարգարիտներ**, **թել-թել նյարդեր**):

բ) երբ որոշիչները բազմազանություն են ցույց տալիս (**անթիվ մարդիկ**, **բազմաթիվ երեխաներ**, **անհամար առաջադրանքներ**, **այլազան հարցեր**, **բազում ծաղիկներ**):

գ) երբ բազմակի որոշիչները վերաբերում են տարբեր որոշյալների (**կարմիր ու սպիտակ մեխակներ**, **լայն ու ընդարձակ սենյակներ**, **խելոք ու բանիմաց ուսանողներ**, **կարճ ու երկար խողովակներ**):

Ցանկացած ածականը և մի շարք դերանուններ էլ՝ **յուրաքանչյուր**, **ամբողջ**, **որևէ**, **որևիցէ**, **ամեն**, **ամեն մի**, **մի,** պահանջում են եզակի թվով որոշյալ (**ամբողջ աշխարհը**, **որևէ դեպք**, **յուրաքանչյուր մասնակից**, **ցանկացած գործ**, **մի մարդ**):

2. **<<Համաձայնությունը կապակցման եղանակ է, որի դեպքում կապակցվող անդամները փոխադարձաբար պայմանավորում են միմյանց քերականական ձևը>>:**[1] Այդպես են կապակցվում նախադասության անդամներից ենթական և ստորոգյալը, բացահայտիչը և բացահայտյալը:

Ենթական և **ստորոգյալը** համաձայնում են թվով և դեմքով: Համաձայն օրինաչափության՝ եզակի ենթական պահանջում է եզակի ստորոգյալ, հոգնակի կամ բազմակի ենթական՝ հոգնակի ստորոգյալ: Օրինակ՝ **Ծառը ծաղկեց: Ծառերը ծաղկեցին: Ծառ ու ծաղիկ ծաղկեցին:** Դիմանիշ դերանուններով արտահայտված ենթակաների դեպքում համաձայնում են նաև դեմքով: Օրինակ՝ Մի հավք **զարկի ես** մի օր: Մի հավք **զարկեցիր դու** մի օր: Մի հավք **զարկեց նա** մի օր:

Օրինաչափությունից կան շեղումներ՝

ա)եթե եզակի թվով ենթական ունի մեկից մեծ թվականով կամ թվականական դերանունով արտահայտված որոշիչ, ապա ստորոգյալը կարող է լինել և՛ հոգնակի (Փողոցով **սլանում էին երկու մեքենա**: Գետնին **ընկած էին մի քանի գերան**), և՛ եզակի (Ընդամենը **հինգ զորամաս է մասնակցում** զորավարժություններին: Քո աշխատանքում **հայտնաբերվել է երկու թերություն**):

բ)եթե բազմակի ենթականերն իմաստով հարաբերակից են և միասին արտահայտում են մեկ հասկացություն, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝ Գարնանային **վար ու ցանքը** եռուզեռի **մեջ է**:

---

[1] *Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Շարահյուսություն, Եր., 2009, էջ 11:*

գ)եթե բազմակի ենթականերն ունեն **յուրաքանչյուր**, **ամեն**, **ամեն մի**, **ոչ մի** դերանուններով արտահայտված ընդհանուր որոշիչ, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝ **Յուրաքանչյուր փողոց ու նրբանցք պետք է բարեկարգվի ու մաքրվի:**

դ)եթե նույն դեմքով բազմակի ենթականները կապված են **կամ**, **կա՛մ...կա՛մ** շաղկապներով, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝**Կասմունքի Անուշը կամ Արմինեն:**

ե)եթե բազմակի ենթականերից մեկը նախորդում, մյուսը հաջորդում է ստորոգյալին, այն դրվում է եզակի թվով: Օրինակ՝Այդ ամենից ջինջ **հիշողություն է մնացել և** մի **կսկիծ:**

Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ գոյականով արտահայտված ստորոգելին սովորաբար լինում է հոգնակի թվով, օր.՝ **Արամն ու Անուշը** մեր դասարանի **առաջավորներն են**: Բայց կարող է լինել նաև եզակի թվով, եթե՝

ա) ենթական հարգական հոգնակի նշանակող անձնական դերանուն է: Օրինակ՝ **Դուք** մեր առաջին **ուսուցիչն եք եղել**:

բ)ստորոգելին գնահատող իմաստ ունի և անհոգնական կամ անհաշվելի է: Օրինակ՝ **Երեխաները** մեր երկրի **ապագան են**:

գ)ստորոգելին շեշտում է իր արտահայտած առարկայի ոչ թե քանակը, այլ տեսակը՝ դրվելով անորոշ առումով: Օրինակ՝ **Սրանք** դեռ **երեխա են**:

Յուրաքանչյուրը, ամեն մեկը, ոչ մեկը դերանուններով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը լինում է եզակի երրորդ դեմքով՝ **Յուրաքանչյուրն** իր գործն **է անում**: Զարդաքանդակներից **ոչ մեկը** մյուսին **չի կրկնում**: Դիմային անհամաձայնությամբ՝ **յուրաքանչյուրս, ամեն մեկս, ոչ մեկս, յուրաքանչյուրդ, ամեն մեկդ, ոչ մեկդ** դերանուններով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը դրվում է երրորդ դեմքով, օրինակ՝ **Ոչ մեկս** դա չպետք **է մոռանա**: **Ամեն մեկդ** մի բան **է ասում**: Նշված դերանունների դեպքում ստորոգյալը կարող է դրվել առաջին կամ երկրորդ դեմքով, եթե հոգնակի թվով է: Օրինակ՝ **Յուրաքանչյուրս** մի առանձին գործ **ենք անում**: **Ամեն մեկդ** ձեր անելիքն **իմացեք**:

Համաձայնությամբ կապակցվում են նաև բացահայտիչն ու բացահայտյալը: Համաձայնությունը սովորաբար լինում է դեմքով, թվով, հոլովով և առումով: Դիմային համաձայնությունը կատարվում է անձնական դերանուններով և կամ դիմորոշ հոդերով: Օրինակ՝ **Ձեզ՝ այլախոհներիդ**, շատերը հանդուրժել չեն կարող: **Ես՝** երկրի **զինվորս,** պատրաստ եմ պայքարել հանուն Արցախի ապանվտանգության:

Բացահայտիչն ու բացահայտյալը երբեմն կարող են չհամաձայնել՝

ա)թվով՝ Ամենայն հոգատարությամբ պետք է վերաբերվենք **երեխաներին**՝ մեր երկրի **ապագային**: Զրկվեցինք մեր ամենամեծ

արժեքից՝ մեր նախնիների ժառանգած **տարածքներից**: Ահա մեր **գերազանցիկները՝ Անին** ու **Հայկը**:

ա)հոլովով՝ Հյուրասենյակները կահավորված են թանկարժեք **կահկարասիով՝ բազմոցներ, սեղաններ, սպասքապահարան, գրապահարան:** Մեր ընտանիքը բաղկացած է **չորս հոգուց՝ ես, մայրս, հայրս ու եղբայրս**, և ապրում է երկսենյականոց բնակարանում: Առաջարկեցի երեք թատերախաղերից՝ «Վենետիկի վաճառականը», «Տիմոն Աթենացի» և «Օթելլո», որևէ մեկն ընտրել:

գ)դեմքով՝ **Ես՝** իմ ընտանիքի **գլխավորը**, չէի կարող անտարբեր մնալ՝ տեսնելով այդ ամենը: **Գերազանցիկներդ՝** մեր **հույս ու ապավենը**, հանկարծ մեզ խայտառակ չանեք:

դ)առումով՝ Ադամ, ահա քեզ **ընկեր՝** գեղեցիկ **Լիլիթը:** Դաշտ էր գնացել ամբողջ **գյուղը՝ տղամարդ ու կին, ծեր ու ջահել, աշխատող ու թոշակառու**: Այցելեցինք Սյունիքի **քաղաքները՝ Գորիս, Կապան, Քաջարան, Մեղրի, Սիսիան:**

3.<<Շարադասությունը բառերի, նախադասության անդամների, բառակապակցության անդամների, բարդ նախադասության բաղադրիչների շարակարգային՝ գծային որոշակի հաջորդականություն է, որը հնարավորություն է տալիս ձևավորելու խոսքը, նրա միավորների դիրքը և հաջորդականությունը>>:[1] Նախադասության անդամների շարադասությունը կարող է լինել սովորական և շրջուն:

Ա.Սովորական շարադասության դեպքում ենթական սովորաբար նախորդում է ստորոգյալին: Օրինակ՝ **Արևը մայր է մտել: Դու** հետաքրքիր մտքեր **ունես:** Կան կառույցներ, սակայն, որոնցում ենթական ուղիղ շարադասությամբ հաջորդում է ստորոգյալին: Դա բնորոշ է հատկապես անորոշ առումով ենթակա պարունակող նախադասությանը: Օրնակ՝ Սրտիս վրա **իջնում է անդորը**:

Այսպիսի դեպքերում ենթակայի նախադաս դիրքն է շրջուն, օր.՝ **Անդորը է իջնում** սրտիս վրա:

Բ.Տարաբնույթ (տարադաս) բազմակի որոշիչների սովորական շարադասության նախընտրելի կարգը հետևյալն է՝ գոյական որոշիչ - դերբայ որոշիչ- ածականական դերանուն որոշիչ-հարաբերական ածական որոշիչ - թվական(կամ թվականական դերանուն կամ թվանիշ ածական) որոշիչ - որակական ածական որոշիչ-որոշյալ:

Շարադասության նշված կարգը կարող է խախտվել՝

ա. հետադաս բազմակի որոշչի դեպքում: Օրինակ՝ **Դա մի փոքրամարմին կին էր՝ տարօրինակ, ծեր, առողջությունից զրկված,**

[1] ***Հ. Զ. Պետրոսյան***, *Հայրենագիտական բառարան, Եր., 1987, էջ 491:*

անհրապույր տեսքով և շատախոս: Այսպիսի հետադաս որոշիչները միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում են շաղկապով:

բ. այն դեպքում, երբ առկա է որոշիչ-որոշյալի կայուն կապակցություն՝ տերմինի արժեքով (**ելից մատյան, մարած փոխաբերություն, խոսքի մաս, սեղանի թենիս** և այլն), որին նախորդում են մյուս բոլոր ազատ որոշիչներն ընդունված կարգով: Օրինակ՝ Վերլուծենք **մի քանի հետաքրքիր մարած** փոխաբերություն: **Այս բոլոր սպասարկու խոսքի** մասերն արդեն ուսումնասիրել ենք:

գ. այն դեպքում, երբ բազմակի որոշյալներից ամեն մեկն ունի իր որոշիչը, իսկ բոլորը միասին ունեն ևս մի ընդհանուր որոշիչ, որը, անկախ իր արտահայտությունից, նախորդում է մյուս բոլորին: Օրինակ՝ Գրքում տեղ են գտել **բազմաթիվ** դաշնամուրային մանրանվագներ, մանկական երգեր, ժողովրդական խմբերգեր:

4.**Խնդրառությունը շարահյուսական ստորադասական կապակցության այն եղանակն է, որի դեպքում լրացումը գերադաս անդամի թելադրանքով դրվում է որևէ հոլովով կամ ձևավորվում է կապերի միջոցով:**[1] Խնդրառությունը լինում է ուժեղ և թույլ: Ուժեղ խնդրառությամբ են պայմանավորված ներգործական սեռի բայերը: Նրանց՝ ուղիղ խնդիր պահանջելը ընդհանուր կանոն է:

ա.**Ուղիղ խնդիրը** ժամանակակից հայերենում արտահայտվում է ուղղական հոլովով՝ իրի դեպքում և տրական հոլովով՝ անձի դեպում: Ընդհանուր օրինաչափությունից շեղվում են **հաղթել, խաբել** և **ունեմ, ունենալ** բայերը: **Հաղթել և խաբել** բայերի մոտ ուղիղ խնդիրը թե՛ անձի, թե՛ իրի դեպքում դրվում է միայն տրական հոլովով՝ **հաղթել թշնամուն** և **հաղթել ցավին**, **խաբել ընկերոջը և խաբել կազմակերպությանը**: **Ունեմ** և **ունենալ** բայերը անձ ցույց տվող գոյականների դեպքում պահանջում են ուղղականաձև ուղիղ խնդիր, ինչպես՝ **Ես ունեմ հայր, մայր,եղբայր:** Սրանց կողքին անձնանիշ դերանուններով արտահայտված ուղիղ խնդիրը լինում է տրականաձև, ինչպես՝ **Ես քեզ իմ սրտում ունեմ: Մայրս ինձ ունեցել է քսան տարեկանում:**

Ուղիղ խնդիրը երբեմն լինում է բացառական հոլովով՝ կոչվելով **մասնական ուղիղ խնդիր**: Օրինակ՝Ծորակի **ջրից** չեմ խմում: Հաղորդեցին Կոմիտասի **երգերից**:

բ.Հանգման խնդիրը սովորաբար լրացնում է չեզոք սեռի բայերին, մի շարք բաղադրյալ ստորոգյալների: Երբեմն, որպես անկանոնություն,

---

[1] *Տե՛ս **Պապոյան Ա., Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 30:*

լրացնում է զգացական ձայնարկություններին (**ամոթ**, **վայ**, **թու** և այլն), որոշ վերաբերականների (**երանի**, **ափսոս**, **ավաղ**). **Ամոթ** քեզ նման գոված **իգիթին**: **Երանի** հոգով **աղքատներին**:

Անկանոնություն պետք է համարել նաև հանգման խնդրի՝ բացառական հոլովով արտահայտվելը **կառչել, կպչել, դիպչել** բայերի դեպքում: Օրինակ՝ Նա **կառչեց** այդ **մտքին/մտքից**:

գ.Ներգործող խնդիր ունեցող նախադասության ստորոգյալը արտահայտվում է կրավորական սեռի բայով: Սակավ դեպքերում, սակայն, ինչպես նշում է Ս. Աբրահամյանը, այն, որպես անկանոնություն, կարող է արտահայտվել չեզոք սեռի բայով: Այդպիսի բայերից են՝ **ամաչել, գոհանալ, վախենալ, նեղանալ, սարսափել, սոսկալ** և այլն: Օրինակ՝ Նա **վախեցավ օձից**: Նա **սարսափեց թշնամուց**: Ըստ Ս. Աբրահամյանի՝ կրավորական և չեզոք սեռերի բայերի ներգործող խնդիրների հարաբերակցության և ընդհանրության մասին է խոսում այն իրողությունը, որ հաճախ միևնույն ներգործող խնդիրը կարող է գործածվել թե՛ կրավորական, թե՛ չեզոք սեռի բայերի հետ՝ պահպանելով միևնույն քերականական իմաստը: Հմմտ. Զեկուցողի **ելույթը** միահամուռ հավանության արժանացավ նիստի բոլոր **մասնակիցների կողմից**: Զեկուցողի ելույթը հավանությամբ ընդունվեց նիստի բոլոր **մասնակիցների կողմից**: [1]

5. Բազմակի տարադաս որոշիչները նախադաս դիրքում չեն կապվում **և**, **ու**, **կամ**, **թե** շաղկապներով և ստորակետով չեն տրոհվում: Այս օրինաչափությանը չեն ենթարկվում բազմակի հետադաս որոշիչները, որոնք, անկախ իրենց արտահայտության ձևից, միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում են շաղկապով: Օրինակ՝ Հեծյալները՝ **կիսամերկ**, **կմախքացած**, **դեմքի մշուշոտ արտահայտությամբ և լուռումունջ**, օրորվում էին թամբերի վրա:

6.Անվանական է այն անդեմ նախադասությունը, որի գերադաս անդամը, որպես կանոն, արտահայտված է գոյականով կամ գոյականական դերանունով, երբեմն՝ ածականով, թվականով, մակբայով:[2] Լինում են նաև անդեմ նախադասություններ, որոնց գերադաս անդամը արտահայտված է վերաբերականով կամ ձայնարկությամբ: Օրինակ՝ **Վայ** մեզ՝ մոլորյալներիս: **Ո՛չ** ինքնակոչ նախագահին: **Երանի** հոգով աղքատներին: **Ա՛յ** քեզ բան... **Ահա** և ես: **Ահավասիկ** իմ ներդրումը: **Ափսո՜ս**, **հազա՜ր ափսոս** մեր Թլոլ Դավթին:

7.Վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերի համակարգում որպես յուրահատկություն կարելի նշել **երանի, երնեկ**, **ափսոս**

---

[1] *Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Հայոց լեզու, Շարահյուսություն, Եր., 2004, էջ44:*

[2] *Տե՛ս **Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան**, Շարահյուսություն, Ե., 2009, էջ 111:*

վերաբերականների՝ գլխավոր նախադասության դերով հանդես գալը: Օրինակ՝ **Երանի** նրան, ում հոգին խաղաղ է ընդմիշտ: **Ափսոս,** որ մենք երբևէ լավ իշխանություն չենք ունեցել:

8.Նախադասության անդամների կապակցման տեսանկյունից անկանոնություն պետք է համարել բուն բացահայտիչ-բացահայտյալի կապակցումը **այսինքն, այն է** ստորադասական շաղկապներով: Օրինակ՝ Նա որոշեց շարունակել հոր մասնագիտությունը, **այն է՝** դարբնություն: Այստեղ **դարբնություն** բառով բացահայտվում է, թե որն է մասնագիտությունը: Նույնպիսի յուրահատկությամբ բնորոշվում են նաև զուգադրական կազմությամբ ստորադասական մի շարք շաղկապներ, ինչպես՝**չնայած…բայց, թեկուզ …սակայն, թեպետ… այնուամենայնիվ** և այլն: Կապակցելով նախադասության անդամներ՝ նրանք արտահայտում են այնպիսի հարաբերություն, որն ավելի մոտ է համադասությանը, քան ստորադասությանը: Օրինակ՝ **Թեպետ ընդունակ, բայց ծույլ** այդ մարդուց ոչինչ չէր ակնկալում:

9.Հնչերանգով պայմանավորված՝ որոշ կառույցներում դրական խոնարհման ստորոգյալը արտահայտում է ժխտական իմաստ, իսկ ժխտականը՝ դրական իմաստ: Այսպես՝

-Տղադ ի՞նչ արեց, աշխատանք ճարե՞ց:

-Բա ի՞նչ արեց, ճարեց(այսինքն՝ չճարեց):

Ու՞ր է այստեղ ծաղիկ, որ հավաքենք(այսինքն՝ ծաղիկ չկա):

Ո՞վ է դաս սովորել, որ ես սովորեմ (Ոչ ոք չի սովորել, ես էլ չեմ սովորել):

Բա ես քո մայրը չե՞մ (այսինքն՝ մայրն եմ):

10. Բայական ստորոգյալներին տրվում են հետևյալ հարցերը՝ **ի՞նչ է անում, ի՞նչ է լինում, ի՞նչ է անելու(լինելու), ի՞նչ է արել(եղել), ի՞նչ արեց(ինչ եղավ), ի՞նչ պիտի անի(լինի)** և այլն: Անվանաբայական ստորոգյալներին տրվող հարցը վերաբերում է ստորոգելիին՝ **ո՞վ է, ի՞նչ է, ովքե՞ր են, ինչե՞ր են, ովքե՞ր կլինեն, ի՞նչ դարձավ, ի՞նչ եղավ, որտե՞ղ է, ե՞րբ էր, ո՞րերորդն է, որքա՞ն է, ինչպիսի՞ն է** և այլն:

Կամ, գիտեմ, ունեմ պակասավոր բայերով արտահայտված ստորոգյալները ոչ մի հարց չեն ընդունում: Օրինակ՝ Այդ գործում ես **չկամ**, պարո՛ն: Մայրս **ուներ** ձեռքեր բարակ: Անտառը ծանոթ եր նրան, **գիտեր,** թե որտեղ է սիրում բույն դնել միրհավը:

Այսպիսով՝ ժամանակակից գրական հայերենի շարահյուսական համակարգում՝ պարզ նախադասության սահմաններում, առկա լեզվական նորմով սահմանված օրենքներից շեղվող կազմությունները, անկանոնություններն ու բացառությունները, որոնք կենդանի լեզվի

փոփոխականության, զարգացման ու կատարելագործման գործընթացի արդյունք են, համակարգային կանոնական ձևերի կողքին գործում են որպես հակահամակարգային ձևեր:

Գրականություն

1. Աբրահամյան Ս. և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976:
2. Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975
3. Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987:
4. Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007:
5. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հատոր բ, Եր., 1964:
6. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Հայոց լեզու. Շարահյուսություն, Եր., 2009:
7. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003:
8. Պետրոսյան Հ., Հայրենագիտական բառարան, Եր., 1987:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.թ. Լ.Գ.Մարգարյանը: